

«Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»  
ՊՈԱԿ

« ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՎՊՄԻ-ի պրոռեկտոր, ք.գ.թ.

\_\_\_\_\_ Թումանյան Ս.Ս.

“ \_\_\_\_ ” \_\_\_\_\_ 2008թ.

Կ Ա Ր Գ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
(Մագիստրոսական ատենախոսության)

Քննարկվել և ընդունվել է ՎՊՄԻ գիտխորհրդում  
(արձանագր. թիվ \_\_\_\_ “ \_\_\_\_ ” \_\_\_\_\_ 2009թ.)



Մագիստրոսական ատենախոսությունը պետք է համապատասխանի տվյալ ուղղության Պետական կրթական չափորոշիչի և տվյալ մագիստրոսական ծրագրի պահանջներին, ինչպես նաև վկայի մագիստրոսի՝ ստացված գիտելիքները գիտության ասպարեզում օգտագործելու կարողության մասին:

### **1. Ընդհանուր պահանջներ:**

Մագիստրոսական ատենախոսությունը որակավորման աշխատանք է: Այն հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված արդյունքների և գիտական դրույթների միագումար է, որը վկայում է հեղինակի անձնական ներդրման և տեսական գիտելիքների ու գործնական կարողությունների օգտագործմամբ ինքնուրույն գիտական հետազոտություններ անցկացնելու ընդունակության մասին:

Մագիստրոսական ատենախոսության ուղղությամբ կատարվող աշխատանքները իրականացվում են մագիստրատուրայի ուսումնական պլանով նախատեսված ժամանակի շրջանակներում՝ գիտահետազոտական աշխատանքի համար հատկացված ժամերի, գիտական պրակտիկայի, մագիստրոսական ատենախոսության համար նախատեսված ժամերի հաշվին:

Մագիստրոսական ատենախոսության թեման ընտրվում է ուսանողի կողմից՝ գիտական ղեկավարի և մագիստրոսական ծրագրի ղեկավարի հետ համատեղ՝ մագիստրատուրայում ուսուցման սկզբից երկու շաբաթների ընթացքում: Այդ նույն ժամանակահատվածում մշակվում է մագիստրատուրայի ուսանողի ուսուցման անհատական ուսումնական պլան, որի ձևաթերթը ներկայացված է հավելվածում: Այն հաստատվում է ֆակուլտետի գիտխորհրդի կողմից՝ տվյալ ուսումնական տարվա առաջին նիստին:

Աշխատանքների առանձին տեսակներին ուսումնական պլանով նախատեսված ժամերը գրանցվում են անհատական պլանում:

Առանձին դեպքերում բակալավրի որակավորման աշխատանքի թեման կարող է ծառայել որպես հիմք՝ մագիստրոսական ատենախոսության թեմայի համար:

Մագիստրոսական ատենախոսության թեման վերջնականապես հաստատվում է ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի կողմից՝ գիտական պրակտիկայի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում՝ ուսանողի գիտական պրակտիկայի հաշվետվության արդյունքներով հնարավոր շտկումներ կատարելուց հետո:

Անհատական պլանի, այդ թվում նաև մագիստրոսական ատենախոսության կատարման վերահսկողությունն իրականացվում է երկու անգամ.

1. ուսումնառության առաջին տարվա վերջում՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստին հաշվետվության ձևով,

2. ուսումնառության երկրորդ տարվա վերջում (մայիսի կեսերին)՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի նիստին գիտական զեկուցման ձևով (նախապաշտպանություն):

Մագիստրոսական ատենախոսության ղեկավարը նշանակվում է ռեկտորի հրամանով:

Մագիստրոսական ատենախոսության ղեկավար կարող է նշանակվել մագիստրոսական ծրագրեր իրականացնող ամբիոնի պրոֆեսոր կամ դոցենտ, կամ համապատասխան գիտահետազոտական ինստիտուտի գիտությունների դոկտորի կամ թեկնածուի աստիճան ունեցող աշխատակից:

Մագիստրանտի ղեկավարության համար նախատեսված մանկավարժական ծանրաբեռնվածությունը կազմում է՝ I կիսամյակ՝ 4 ժամ (խորհրդատվություն), II-րդ կիսամյակ՝ 10 ժամ (խորհրդատվություն), III-րդ կիսամյակ՝ 17 ժամ, IV կիսամյակ՝ 17 ժամ որակավորման աշխատանքը ղեկավարելու համար:

### ***2. Մագիստրոսական ատենախոսության բովանդակությունը և բաղկացուցիչ մասերը***

Մագիստրոսական ատենախոսությունը համարվում է ավարտուն գիտական հետազոտություն:

Աշխատանքի բովանդակությունը կարող են կազմել տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները, նոր մեթոդների և գիտական հիմնահարցերի լուծմանն ուղղված մեթոդական մոտեցումները, դրանց տեսական հիմնավորումը:

Մագիստրոսական ատենախոսությունը պետք է կազմված լինի հետևյալ բաժիններից.

- բովանդակություն, որտեղ զետեղվում են աշխատանքի մասերի անվանումներն ու համապատասխան էջերը,
- ներածություն, որտեղ շարադրված են հետազոտության թեմայի ընտրության հիմնավորումը, արդիականությունը և գիտական նորույթը,
- գրականության վերլուծություն, որտեղ քննարկված է գիտության տվյալ ուղղության ժամանակակից վիճակը,
- ուսումնասիրվող նյութի մասին շարադրանքը (հավաքած նյութի վերլուծություն, ստացված արդյունքների քննարկում),
- ամփոփում,
- օգտագործված գրականության ցանկը:

### ***3. Մագիստրոսական ատենախոսության ձևակերպումը և պաշտպանությունը:***

3.1. Մագիստրոսական ատենախոսությունը պետք է ցույց տա հեղինակի կարողությունը՝ համառոտ, տրամաբանորեն և փաստարկված ձևով ներկայացնել իր կատարած աշխատանքի նյութերը:

3.2. Աշխատանքը պետք է ձևակերպված լինի՝ համաձայն հետևյալ պահանջների.

- ատենախոսության ծավալը պետք է կազմի 50- 60 տպագիր էջ (որոշ մասնագիտությունների համար թույլատրվում է ավելի փոքր ծավալ), ներառյալ

աղյուսակները, գրաֆիկները, նկարները, օգտագործած գրականության ցանկը և բովանդակությունը (տիտղոսաթերթի ձևը տե՛ս հավելվածում),

- ատենախոսությունը պետք է ներկայացված լինի էլեկտրոնային տեսքով՝ Word-ի ֆորմատով, տպագիր՝ երկու օրնակից, 12 տառաչափով, A4 (210x297 մմ) չափի սպիտակ թղթի մի կողմի վրա, երկու քայլքով: Էջերը պետք է ունենան լուսանցքներ (ծախից՝ 30 մմ, վերևից՝ 20 մմ, աջից՝ 10 մմ, ներքևից՝ 25 մմ,
- ատենախոսության մասերի անվանումները պետք է լինեն մեծատառերով և սկսվեն նոր էջից,
- աղյուսակները և այլ լուսաբանող նյութերը կարող են ներկայցվել հավելվածում,
- ատենախոսության ձեռագրին կից ներկայացվում է ռեֆերատ՝ մեքենագիր մեկ էջի ծավալով, որտեղ շարադրվում են պաշտպանությանը ներկայացվող աշխատանքի հիմնական դրույթները,
- Ատենախոսության բոլոր էջերը, ներառյալ լուսաբանող նկարները, աղյուսակները, հավելվածները և այլն, համարակալվում են: Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որի վրա համար չի դրվում:

3.3. Ատենախոսության վերջնական պաշտպանությունից մեկ ամիս առաջ կատարված աշխատանքը հանձնվում է գիտական ղեկավարին:

3.4. Ատենախոսության վերջնական պաշտպանությունից երկու շաբաթ առաջ կատարված աշխատանքը գիտական ղեկավարի կարծիքի հետ միասին հանձնվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին:

3.5. Ձևակերպված աշխատանքը բոլոր կից փաստաթղթերի հետ (գրախոսական, գիտական ղեկավարի կարծիք՝ գնահատականով, անհատական պլան՝ կատարման մասին նշումներով) հանձնվում է Պետական որակավորման հանձնաժողովի քարտուղարին ոչ ուշ, քան այդ հանձնաժողովի աշխատանքները սկսվելուց մեկ շաբաթ առաջ:

Ատենախոսությանը կից ներկայացվում է աշխատանքի համառոտ բովանդակությունը և գրախոսականը: Աշխատանքի գրախոսությունը իրականացվում է տվյալ ասպարեզում աշխատող մասնագետի (որպես կանոն, գիտական աստիճան ունեցող) կողմից:

Գրախոս չի կարող լինել տվյալ աշխատանքի գիտական ղեկավարը, մագիստրոսական ծրագրի ղեկավարը, ՎՊՄԻ-ի հաստիքային աշխատակիցը, պետական հանձնաժողովի անդամը:

3.6. Պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ տեղի է ունենում համապատասխան ամբիոնների նիստ՝ մագիստրոսական ծրագրի ղեկավարի ներկայությամբ, որի ընթացքում կայացվում է վերջնական որոշում՝ ատենախոսությունը պաշտպանության ներկայացնելու մասին: Ամբիոնը կարող է նաև հետաձգել պաշտպանությունը, կամ չներառվել այն, եթե՝

- մագիստրանտն ունի ակադեմիական պարտքեր, կամ բացասական գնահատականներ ուսումնական պլանով նախատեսված առարկայից կամ առարկաներից,
- խախտել է սույն կարգի 3.2. կետի պահանջները,
- առկա է ատենախոսության ներկայացման ժամկետների և ձևի անհամապատասխանություն,
- բացակայում է գիտական ղեկավարի կամ գրախոսի կարծիքը,
- գիտական ղեկավարը կամ գրախոսը ներկայացրել են բացասական կարծիք:

3.7. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունն անցկացվում է հուլիսի առաջին կեսին՝ պետական որակավորման հանձնաժողովի նիստում:

3.8. Պետական որակավորման հանձնաժողովը ձևավորվում է՝ համաձայն բարձրագույն ուսումնական հաստատությունների որակավորման անցկացման կանոնակարգի:

3.9. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանությանը թույլատրվում է մասնակցել այն մագիստրանտներին, որոնք հանձնել են մագիստրատուրայի ուսումնական պլանով նախատեսած բոլոր քննություններն ու ստուգարքները:

3.10. Պաշտպանության ընթացակարգը ներառում է մագիստրանտի ելույթը՝ մինչև 10 րոպե, պետական հանձնաժողովի անդամների հարցերը, դրանց պատասխանները, գրախոսի ելույթը (ընդդիմախոսի դերում), բանավեճ՝ տվյալ ատենախոսության շուրջ:

3.11. Ատենախոսության գնահատումը կատարվում է պետական որակավորման հանձնաժողովի անդամների բաց քվեարկության միջոցով:

3.12. Մագիստրոսական ատենախոսության պաշտպանության արդյունքները գնահատվում են .... բալերով:

3.13. Պետական որակավորման հանձնաժողովի անդամները գնահատում են ներկայցված աշխատանքի համապատասխանությունը պետական չափորոշիչի պահանջներին՝ ըստ հետևյալ ցուցանիշների.

- խնդրի դրվածքը, աշխատանքի արդիականությունը և նորույթը,
- հետազոտության մեթոդների ընտրությունը և հիմնավորումը, դրանց հուսալիության և ճշտության գնահատումը,
- հետազոտությունների մեթոդիկան (փորձարարական աշխատանքների համար՝ փորձերի պլանավորում, չափումների մեթոդիկաների կամ ծրագրերի կարգավորում),
- գիտահետազոտական աշխատանքի արդյունքները և դրանց մեկնաբանման մակարդակը,
- ուսանողի ինքնուրույնության աստիճանը և նրա անձնական ներդրումը կատարված աշխատանքում,
- աշխատանքի ձևակերպման և ներկայացման մակարդակը, այդ թվում նաև կատարած գծագրերի, նկարների, գրաֆիկների որակը,

- հրապարակումների, մրցույթների հաղթողի դիպլոմների, տպագրության երաշխավորագրերի և այլ նման նյութերի առկայությունը:

3.14. 3.13 կետում նշված ուրաքանչյուր հարցի համար նախատեսված է 7բալ: Գրախոսի կարծիքը գնահատվում է 7 բալ, ղեկավարի կարծիքը՝ 6 բալ:

3.15. Պետական որակավորման հանձնաժողովի կազմը հաստատվում է ՎՊՄԻ-ի ռեկտորի հրամանով: Հանձնաժողովի նիստը համարվում է վավեր, եթե նրա աշխատանքին մասնակցել են հաստատված կազմի անդամների երկու երրորդը:

3.16. Հանձնաժողովի նիստը վարում է նախագահը: Յուրաքանչյուր մագիստրոսական ատենախոսության պաշտպանությունը ներառում է մագիստրանտի ելույթը, նրա պատասխանները հանձնաժողովի անդամների հարցերին, բանավեճ՝ աշխատանքում արժարժված գիտական հիմնահարցի շուրջ, գիտական ղեկավարի և գրախոսի կարծիքների ընթերցում:

Հանձնաժողովի անդամների խորհրդակցության արդյունքներով կայացվում է ընդհանուր որոշում՝ պաշտպանության արդյունքի վերաբերյալ: Պաշտպանության ընթացքը և արդյունքները ձևակերպվում են արձանագրությամբ:

3.17. Ատենախոսի զեկուցումը պետք է համապատասխանի աշխատանքի բովանդակությանը: Ջեկուցման տևողությունը՝ 10 րոպե: Ջեկուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- աշխատանքի նպատակը և խնդիրները,
- աշխատանքի արդիականությունը,
- աշխատանքի հիմնական գաղափարը և ամենակարևոր հետևությունները՝ համառոտ ամփոփումով:

Ցանկալի է ցուցադրական նյութերի կիրառում (սլայդներ, պաստառներ և այլն):

3.18. Հանձնաժողովի բացասական կարծիքի դեպքում մագիստրանտը կարող է 2 օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահին ներկայացնել գրավոր դիմում՝ կրկնակի պաշտպանության խնդրանքով, ինչպես նաև բողոքարկել կայացված որոշումը:

Բողոքարկումը քննարկում է ՎՊՄԻ-ի գիտական խորհուրդը:

Ատենախոսությունը վերափոխված ձևով ներկայացվում է կրկնակի պաշտպանության՝ առաջին պաշտպանությունից մեկ ամիս հետո: Եթե հանձնաժողովը նորից կայացնում է բացասական որոշում, ապա մագիստրանտը պարտավոր է կատարել նոր աշխատանք՝ այլ թեմայով, և այն ներկայացնել պաշտպանության ոչ շուտ, քան առաջին պաշտպանությունից մեկ տարի հետո:

Կրկնակի պաշտպանության և նրա ժամկետների մասին որոշումն ընդունում է Պետական հանձնաժողովը:

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍԱՆՈՂԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

1-4 կիսամյակի համար

ԱԱԶ (լրիվ)

Մասնագիտությունը \_\_\_\_\_

Ընդունելության տարին \_\_\_\_\_

Մասնագիտության ծածկագիրը \_\_\_\_\_

Կիսամյակի սկիզբը “ \_\_\_\_\_ “ \_\_\_\_\_ 20 թ.

Կիսամյակի ավարտը “ \_\_\_\_\_ ” \_\_\_\_\_ 20 թ.

Ուսուցման ձևը՝ առկա

4.1. Ուսումնական աշխատանք

Առարկա	Կիսամյակ/կրեդիտ				Գնահատական				Դասախոսի ԱԱԳ	Ստորագրություն
	I	II	III	IV	1-ին միջանկյալ (20-բալանոց համակարգ)	2-րդ միջանկյալ (20-բալանոց համակարգ)	քննություն (5-բալանոց համակարգ)	վերջնական, (5-բալանոց համակարգ)		

4.2. Գիտահետազոտական աշխատանք 1-4-րդ կիսամյակների համար:

Առարկա	Գիտահետազոտական աշխատանքի տեսակը, կրճատ բովանդակությունը կիսամյակներում				Աշխատանքի ծավալը, ժամ	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Նշումների կատարման մասին (ստուգված/չստուգված)	Գիտ. ղեկավարի ստորագրությունը
	I	II	III	IV					

Մագիստրանտ՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

Գիտական ղեկավար՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

4.3. Գիտահետազոտական պրակտիկա (4-րդ կիսամյակ).

Առարկա	Աշխատանքի տեսակը, կրճատ բովանդակությունը	Աշխատանքի ծավալը (ժամ)	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Նշումներ կատարման մասին	Պրակտիկայի ղեկավարի ստորագրությունը

Մագիստրանտ՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

Գիտական ղեկավար՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

4.4. Մանկավարժական պրակտիկա (3-րդ կիսամյակ)

Առարկա	Աշխատանքի տեսակը, կրճատ բովանդակությունը	Աշխատանքի ծավալը (ժամ)	Կրեդիտ	Կատարման ժամկետը	Գնահատականը՝ 5-բալանոց համակ.	Պրակտիկայի ղեկավարի ստորագրությունը

Մագիստրանտ՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

Մանկավարժական պրակտիկայի ղեկավար՝ \_\_\_\_\_ «\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.  
ստորագր.

5. Մագիստրոսի կատարած ուսումնական պլանի հաշվետվություն

Կիսամյակ \_\_\_\_\_

ԱԱՀ \_\_\_\_\_

Մասնագիտություն \_\_\_\_\_

Մագիստրատուրա ընդունվելու տարին՝ 20 \_\_\_\_թ.

Ծրագիր, մասնագիտացում \_\_\_\_\_  
( ծածկագիրը և անվանումը)

Կիսամյակի սկիզբը « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ.

Կիսամյակի ավարտը « \_\_\_\_ » \_\_\_\_\_ 20 \_\_\_\_թ.

I. Ուսումնական հատված ( \_\_\_\_ կիսամյակի համար)

Առարկա	Ժամ				Առարկայի կրեդիտ	Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ զնահատական)			Դասախոս (ԱԱՀ)	Ստորագրություն
	դաս.	գործն. (սեմին.)	լաբոր.	ինքն.		1 միջ.	2 միջ.	Վերջն.		

II. Գիտահետազոտական հատված (\_\_\_ կիսամյակի համար)

Առարկա	Փաստացի կատարած գիտահետազոտ. աշխ., նրա կրճատ բովանդակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Գիտական ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

III. Մանկավարժական պրակտիկա (3-րդ կիսամյակի համար)

Առարկա	Պրակտիկայի փաստացի կատարած առաջադր., նրա կրճատ բովանակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Մանկ. պրակտիկայի ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

IV. Գիտահետազոտական պրակտիկա

Առարկա	Գիտահետազ. պրակտիկայի փաստացի կատարած առաջադր., նրա կրճատ բովանակ.	Աշխատանքի փաստացի ծավալը		Նշում կատարման մասին (ստ./չստ., կամ գնահատական)	Գիտական ղեկավար (ԱԱՀ)	Ստորագրություն
		Ժամ	կրեդիտ			

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՐԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Ուսանող՝ \_\_\_\_\_

Թեմա \_\_\_\_\_

Աշխտանքը թույլատրվում է  
պաշտպանության  
Գիտական ղեկավար

\_\_\_\_\_

ԱԱՀ

\_\_\_\_\_

Ստորագր.

Հեղինակ

\_\_\_\_\_

Ստորագր

Մագիստրոսական ծրագրերի  
ղեկավար

\_\_\_\_\_

ԱԱՀ

\_\_\_\_\_

Ստորագր.

ք. Վանաձոր  
20 թ.